

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏՈՒԹՅԱՄԲ ՕԾՎԵՑԻՆ ԳՅՈՒՄՐԻԻ Ս. ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՉԵՐԸ

«Ջսա՛ եղուր երկիւղածաց քոց նշան..., պսակ պարծանաց
կաթուղիկէ եկեղեցւոյ, եւ ամօթ թշնամւոյն:
Ջսա՝ եղեր պարծանս և յոյս հաւատացելոց...»:
«ՄԱՇՏՈՑ»

Նոյեմբերի 7-ը բերկրալից և հիշարժան օր էր հավատավոր գյումրեցիների համար, քանզի ի վերջո իրականությամբ էր զգեստավորվում նրանց վաղեմի երազանքը, որ էր նորակառույց Անի թաղամասում տեսնել դեպ երկինք խոյացող նոր աղոթատուն:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Գյումրի մեկնեց վաղ առավոտյան՝ հանդիսապետելու Ս. Հակոբ եկեղեցու խաչերի օծման ուրախառիթ արարողությունը: Նորին Սրբությանն ուղեկցում էին գավազանակիր Տ. Գեղարդ աբդ. Վահունին և Սևանի Վազգենյան Դպրանոցի բարերարներ տեր և տիկին Ցակուրյանները:

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՈՒՄ

Շիրակի թեմի առաջնորդարանում Ամենայն Հայոց Հայրապետին հանդիսավորաբար դիմավորեցին առաջնորդ Տ. Միքայել եպս. Աջապահյանը, քահանայից և սարկավագաց դասը, պաշտոնեությունը, Շիրակի մարզպետ Ֆելիքս Փիրումյանը, ինչպես նաև քաղաքապետ Վարդան Ղուկասյանը:

Բարիգալստյան խոսքերից հետո, Նորին Սրբությունն առաջնորդարանում հանդիպեց մարզպետ Ֆելիքս Փիրումյանի և քաղաքապետ Վարդան Ղուկասյանի հետ: Քննարկվեցին եկեղեցիների վերաշինության, մարզում Հայորդյաց տներ հիմնելու և եկեղեցապատկան հողերում ֆերմերային տնտեսություններ հիմնելուն վերաբերող հարցեր: Հանդիպմանը մասնակցում էր նաև թեմական առաջնորդը և հյուրաբար Գյումրիում գտնվող Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՕԾՈՒՄ Է ԳՅՈՒՄՐԻԻ Ս. ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՉԵՐԸ

ԼՎԱՑՈՒՄ ԵՎ ՕԾՈՒՄ

Օրվա երկրորդ կեսին Նորին Սուրբ Օծությունն իր շքախմբով առաջնորդվեց դեպի Անի թաղամաս: Ս. Հակոբ նորակառույց եկեղեցու շրջափակում ի մի էր եկել հավատացյալների հոծ բազմությունը՝ ի մոտո տեսնելու և վայելելու ներկայությունը Ամենայն Հայոց Հայրապետի, ում բարձր նախագահությամբ իրականանալու էր խաչերի օծման հանդիսավոր արարողությունը:

Ձեռամբ Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի, Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպս. Աջապահյանի և Ուկրաինայի թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանի, ժամը 16.00-ին սկսվեց հինգ գմբեթների խաչերի լվացումը՝ սաղմոսասացությամբ, Սուրբգրային ընթերցվածներով և հոգեզմայլ շարականների երգեցողությամբ: Համաձայն Մաշտոց ծիսարանի, խաչերը նախ լվացվեցին ջրով, գինով, ապա «Առաքելոյ Աղաւնւոյ» շարականի երգեցողությամբ, խաչանիշ դրոշմմամբ, օծվեցին Սրբալույս Մյուռոնով:

Այնուհետև նորաօծ խաչերը «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի հնչյունների ներքո բարձրացվեցին և տեղադրվեցին Ս. Հակոբ եկեղեցու կենտրոնական գմբեթին և եկեղեցու անկյունները բոլորող չորս զանգակատներին:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ ՀԱՎԱՏԱՎՈՐ ԳՅՈՒՄՐԵՑԻՆԵՐԻՆ

Հավարտ օծման հանդիսավոր արարողության, Վեհափառ Տերն իր հայրապետական պատգամ-հորդորը հղեց բազմաչարչար, սակայն քրիստոնեական հավատքն ամուր պահած հավատավոր գյումրեցիներին:

Հայոց Հայրապետը նախ օրհնության, շնորհավորանքի, երախտիքի ու գնահատության խոսքեր ուղղեց եկեղեցու բարերարներին, որոնց նվիրական ջանքերով ու ջերմեռանդ հավատի շնորհիվ այսօր Անի թաղամասում հպարտորեն կանգուն է Ս. Հակոբը, թեմի բարեխնամ առաջնորդին, ճարտարապետին ու կառուցող վարպետներին և արարողությանը ներկա բազմաթիվ գյումրեցիներին: Ցավով նշելով, որ թեև աստվածմերժության տարիներն իրենց բացասական հետքն են թողել հավատավոր հայորդու հոգու վրա, այնուհանդերձ Նորին Սրբությունը համոզմունք հայտնեց, որ նորակառույց աղոթատունը, ժողովրդին ունկնդիր ու հաղորդակից դարձնելով Աստծո խոսքին և ավետարանական ճշմարտություններին, կդառնա կյանքի բարեփոխության և բարօրության հիմք: Վեհափառ Տերը նաև պատգամեց հավատարիմ մնալ հայրերի սրբազան հավատքին ու Քրիստոսի կենարար Ս. Խաչին, որ 1700 տարի շարունակ եղել է հայ ժողովրդի ապավենը: Այս մասին Նորին Սրբությունն ի մասնավորի ասաց. «Միրելի՛ գյումրեցիներ, մշտապես հիշեք, որ այս եկեղեցու նորոգ օծյալ խաչերից ճառագող լույսը հենց այն աղոթարար լույսի ճառագումներն են, որ

մեզ են հասել չարչարանաց վիրապից, մեր հավատի հոր՝ Ս. Գրիգոր Լուսավորչի հոգու կանթեղից, որ 1700 տարի անընդմեջ լուսավորում և դեպ իրեն է կանչում քաջազուն հայորդիներին»:

ԱՍԵՆՔ ՆԱԵՎ, ՈՐ...

Անի թաղամասում նորակառույց Ս. Հակոբ եկեղեցին վեր է խոյանում ամերիկահայ բարերար Սարգիս Հակոբյանի հովանավորությամբ: Ազգանվեր բարերարն այստեղ եկեղեցի կառուցելու մտահղացում էր ունեցել ի սեր իր թոռնուհու՝ Անի-Արաքսի: Հիմնարկեքի արարողությունը, հանդիսապետությամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի, տեղի էր ունեցել անցած տարվա հուլիսին՝ Նորին Սրբության Շիրակ կատարած անդրանիկ հովվապետական այցի ընթացքում:

Արդեն կանգուն աղոթատունը կառուցվել է ճարտարապետ Բաղդիկ Արզումանյանի նախագծով՝ պատմական Անիի Ս. Առաքելոց եկեղեցու նմանողությամբ: Այն չափերով գերազանցում է առաջնորդանիստ Ս. Աստվածածին կամ, ինչպես հավատավոր գյումրեցին է կոչում՝ Ս. Ցոթվերք եկեղեցուն: Կամարակապ ընդարձակ աղոթասրահում եկեղեցական արարողությունների կարող է մասնակցել շուրջ 500 հավատացյալ: Եկեղեցու նկուղային հարկում կառուցված են ընդարձակ դահլիճ և սենյակներ՝ հոգևոր սպասավորների համար:

Նորակառույց եկեղեցու օծումը նախատեսվում է իրականացնել 2002 թվականի մայիս ամսին: Մինչ այդ կշարունակվեն ներքին հարդարման աշխատանքները, կենտրոնական գմբեթն ու աղոթասրահի կամարները կզարդարվեն զարդաքանդակներով ու Հայոց Եկեղեցու նշանավոր սրբերի բարձրաքանդակներով:

* * *

Խաչերի օծման արարողությանը ներկա էին Շիրակի մարզպետ Ֆելիքս Փիրումյանը, Գյումրիի քաղաքապետ Վարդան Ղուկասյանը, պապական նվիրակ Պետեր Ցուրբրիգենը, Հայ Կաթոլիկ Եկեղեցու ներկայացուցիչները՝ Վարդան եպս. Քեշիշյանի գլխավորությամբ, Վեհափառ Հայրապետին ուղեկցող ազգային բարերարներ տեր և տիկին Ցակուբյանները, տեղական իշխանությունների ներկայացուցիչներ, պաշտոնատար այլ անձինք:

Հանդիսավոր արարողակարգից հետո Նորին Սուրբ Օծությունը մանրակրկիտ դիտեց կառույցը և հետագա աշխատանքների կազմակերպմանը վերաբերող համապատասխան կարգադրություններ արեց:

***

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին վերադարձից առաջ Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետը եղավ նաև 1988 թ. երկրաշարժից հիմնովին ավերված, սակայն այժմ վերակառուցվող Ս. Ամենափրկիչ եկեղեցում, ծանոթացավ վերականգնողական աշխատանքների ընթացքին, զրուցեց վարպետ-շինարարների հետ: Հուրախություն հայ հավատավորի ասենք, որ 19-րդ դարում կառուցված այս եկեղեցին, որ հար և նման է Անիի Մայր Տաճարին, արդեն իսկ կիսով չափ կանգուն է և մոտ ապագայում նախատեսվում է կատարել վերաօծման հանդիսավոր արարողությունը:

«Սա՛ եղիցի մեզ ճանապարհ եւ ճրագ լուսոյ՝ ուղղելով զշաւիղս մեր ի հաճոյս քեզ»,- Մաշտոց ծիսարանի այս հորդորով էլ հենց բարեպաշտ գյումրեցիները սիրով ու խոնարհությամբ հրաժեշտ տվեցին իրենց Հայրապետին: